«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ԱՌԱՐԿԱ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿ ՀԵՂԻՆԵ ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ <<ՃԱՄԲԱՐԱԿԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

Բովանդակության ցանկ

Ներածություն ----------3

Գլուխ 1----------5

Մաս 1 Սատրապական Հայաստանի դրամենրը----------5

Մաս 2 Հայկական առաջին դրամները ----------9

Մաս 3 Արտաշեսյան դրամները----------10

Գլուխ 2----------14

Մաս 1 Արշակունյաց Հայաստանի դրամաշրջանառությունը ----------14

Մաս 2 Բագրատունյաց Հայաստանի դրամները----------18

Մաս 3 Կիլիկիայի հայոց թագավորության դրամները----------20

Գլուխ 3----------22

Մաս 1 Հայաստանի 1-ին անկախ հանրապետության դրամները----------22

Մաս 2 Հայաստանի 2-րդ անկախ հանրապետության դրամները----------23

Եզրակացություն և առաջարկություններ----------26

Օգտագործված գրականության ցանկ----------28

Ներածություն

Հայկական դրամը Հայաստանի ազգային արժույթն է Դրամը ընդհանրական համարժեքի դեր կատարող հատուկ ապրանք, մյուս բոլոր ապրանքների արժեձև[1] : Դրամ հասկացությունը կապված է ոսկուց պատրաստված դրամական նիշի հետ: Աշխատանքի երրորդ խոշոր բաժանման արդյունքում ընդլայնվեց ապրանքափոխանակության ոլորտը և զգացվեց մետաղադրամների անհրաժեշտություն:Սկիզբ առավ որոշակի կշիռ և հարգ ունեցող լիարժեք դրամ: Համաշխարհային շուկայի ձևավորմամբ դրսևորվում է դրամի համաշխարհային ֆունկցիան: Արևելքում հին դրամների ու դրամական գանձերի հայտնություններով ամենահարուստ երկրներից մեկը Հայաստանն է: Հայաստանի տարածքում հայտնաբերված ամենահին մետաղադրամները վերաբերում են Ք. ա. VI-V դարերին: Դրամագետները ցույց են տալիս, որ Հայաստանում միշտ հայտնաբերվել են տարբեր դարաշրջանների պատկանող հին ու միջնադարյան դրամներ: Հայաստանում հայտնաբերվել են տարբեր ազգային ծագում ունեցող դրամներ ու դրամական ամբողջական գանձեր: Գրավոր աղբյուրների հաղորդմամբ հայ ժողովուրդը մեծ դեր է ունեցել Արևելքի ու Արևմուտքի միջազգային ապրանքափոխանակության գործում: Հայաստանի դրամական գանձերի ուսումնասիրությունները ունեն աղբյուրագիտական նշանակություն եթե նկատի ունենանք, որ դրանք կապված են Արևելքում տարբեր հարաբերությունների ծագման ու զարգաման պատմության հետ: Հետազոտությունների այս ուղղությամբ լույս կսփռեն ոչ միայն բուն Հայաստանի, այլև նրա հետ առընչված երկրների պատմության հարցերին (ժամանակագրություն, չափագիտություն, պատկերագիտություն, հնագիտություն, արվեստ և այլն)[2]:

Հայաստանում գտնված ամենահին դրամները հունական Մելիտոս քաղաքում թողարկված երկու դիոբոլոսներն են (OBOAOE): Օբողոսներից յուրաքանչյուրը հավասար էր երկու դրախմայի, ընդ որում մեկ դրախման պարունակում էր իր մեջ վեց օբողոս:

---

1 ՀՍՀ-հատոր 3 էջ 484

2 Խաչատուր Մոշեղյան <<Դրամագիտական շրջանառությունը Հայաստանում

Հունական արծաթե դրամ թողարկված Քա (մթա)6-5-րդ դդ Մելիտոս քաղաքում

Մինչև Քա. 4- րդ դարի վերջին տասնամյակը, երբ միջազգային առևտրում դեռ չէին երևացել Ալ. Մակեդոնացու դրամները, մեծ տարածում են ունեցել Աթենական տետրադրախմաները: Նման դրամներ են հայտնաբերվել Սիսիանում: Որքան էլ հետաքրքրական լինի այս դրամի հայտնությունը սակայն նրա դերի ու նշանակության մասին դատել հնարավոր չէ:

Հունական չորեք դրամ թողարկված Աթենքում մթա 6-5 դարերում: Գտնված Սիսիանում 1963թ.

Հայաստանում գտնված ամենահին դրամները վերաբերում են Ք. ա. 6-5 րդ դարերին, և իրենց պատկերագրությամբ ու կշռային տվյալներով ներկայացնում են հին պատական, մելետեան և ատտիկական դրամակշռային դրույթները, որոնք ընդունված են եղել Փոքրասիական շուկաներում: Հայաստանում հայտնվել են հատուկենտ նմուշներով, արձանագրված Այրարատում և Սյունիքում

Գլուխ 1

Մաս 1 Սատրապական Հայաստանի դրամները

Ք. ա. 5- րդ դարի վերջին Աքեմենյան բռնակալությունը անկում էր ապրում: Այդ ժամանակ Առաջավոր ու Միջին Ասիայի տեղական սատրապները (փոխարքաները) նվաճել էին սեփական դրամ հատելու իրավունքը, որը նախկինում արքայից արքայի մենաշնորհը: Այս սատրապական դրամների շարքում պահպանվել են դրամական միավորներ, որոնք թողարկվել են Հայաստանում աքեմենյան կառավարիչներ Տիրիբազի և Օրոնտեսի կողմից: Նրանց հատած դրամները պատմության համար ունեն սկզբնաղբյուրի նշանակություն: Պարզվում է, որ Տիրիբազը և Օրոնտեսը Հայաստանում դրամներ չեն թողարկել:

Նրանք դրամներ թողարկել են Աքեմենյանների Փոքրասիական երկրամասերում, որտեղ իշխանություն են ունեցել և դրամներ թողարկել են տեղական առևտրի համար: Տիրիբազի դրամները դրփագվել են Կիլիկիայի Իսոս, Սոլի, Մալլոս և Տարսոն քաղաքներում Ք. ա. 386-380 թվականներին: Նրա դրամները իրենց վրա կրում են Ահրումազդայի, Բահալի, Հերակլեսի, Անահիտի, Դիոնիսոսի պատկերները և Տիրիբազի դիմանկարը: Իսոս քաղաքում թողարկված Ք. ա. 386- 380 թթ դրամը նկարագրված է այսպես՝. Ա. կողմ. Կենտրոնում պատկերված է հողի և ջրի Աստված Բահազի, առնական, բաց կրծքով, ուսից մինչև ոտքերը ծիրանում, մորուքավոր դեմքով, նայում էր իր աջին բազմած արծվին, իսկ մի ձեռքին բռնել է գավազանը:

Աջից ատամներն արձանագրված է Տիրիբազի անունը, ձախից՝ հունարեն Իսոս քաղաքի անունը[1]: Բ. կողմ. Կենտրոնում պատկերված է Աքեմենյանների գերագույն Աստված Ահրումազդան, գլխին պսակ, դեմքը մորուքավոր, ձախ ձեռքին շուշան, աջով պահում է ու գլխին է մոտեցրել ճառագայթը, որ մի ճառագայթ է դեպի վերև բարձրացրած թևի տակ հունարեն գրելով A MP: Դիցական այս պատկերի ներքևում ոտքերի փոխարեն ունի թևեր և պոչ, որը խորհրդանշում է իբրև երկնքում ճախրող տիրակալ[2]: Արծաթյա այս դրամը պահվում է Փարիզում, Ազգային մատենադարանում:

1-2 Խաչատուր Մուշեղյան <<Դրամագիտության շրջանառությունը Հայաստանում>>

Հայաստանի Աքեմենյան փոխարքա Տիրիբազոսի արծաթյա դրամը մթա 4-րդ դար

Կշռային տվյալներով դրանք պատկանում են, աքեմենյան համակարգին և թողարկված են բացառապես արծաթից, դրանք մեծ մասամբ դրախմաներ են,և փոքր արժեչափի միավորներ՝օբոլոսներ: Այս դրամները շրջանառության մեջ են եղել Կիլիկիայի, Փոքր Ասիայի և Միջագետքի տարանցիկ առևտրի համար: Բացի վերոհիշյալ դրամից Տիրիբազը թողարկել է նաև դրամներ Մալլոս քաղաքում Ք.Ա. 4-րդ դար[1]:

Աքեմենյան փոխարքա Տիրիբազոսի դիմաքանդակը մթա 4-րդ դարում

Նույնանման այլ դրամներ թողարկված Սոլի քաղաքում հայտնի են Բրիտանական թանգարանի հրատակությամբ: Դրամների վրա ինչպես Հերակլեսի,այնպես էլ Տիրիբազի դիմաքանդակներն են:

1-Խաչատուր Մուշեղյան <<Դրամագիտության շրջանառությունը Հայաստանում>>

Դյուցազնական Հերակլեսի պատկերը Հայաստանի
փոխարքա Տիրիբազոսի դրամի վրա մթա 4-րդ դար

Հայաստանի սատրապ Օրենտեսի դրամները հայտնի են ոսկյա,արծաթյա և պղնձյա օրինակներով: Դրամնեդը թողարկվել են Ք.Ա. 362թ Լամպսակ, Կլազոմեն և այլ քաղաքներում: Դրանց թողարկումը պայմանավորված է տեղական պահանջով: Օրոնտեսի դրամի վրա պատկերված են հեթանոսական աստվածներ Զևսի, Աթենասի պատկերները: Պատկերված են նաև արևի պաշտամունքին վերաբերող խորհրդանշաններ և աքեմենյան տիրակալների ու իրեն՝ Օրոնտեսի դիմանկարը: Ք.Ա. 362թ. Լամպսակում թողարկված դրամի մի կողմում Զևսի կիսանդրին է, գանգրահեր գլխով և մորուքով,դարձ երեսին՝թևավոր ձի առջևի ոտքերով թռիչքի մեջ:

Շուրջը հազիվ նշմարելի պահպանվել են OPONTA հունարեն գիրը որոնցով հիշատակված է Օրոնտեսի անունը[1]: Դրամը պահպանվում է Փարիզում, Ֆրանսիայի ազգային մատենադարանում:

Հայաստանի Աքեմենեան փոխարքայ Օրոնտասի ոսկեայ դրամը թեւաւոր ձիու պատկերով, թողարկուած մ. թ. ա. 4րդ դարում, Լամպսակ քաղաքում: Մեծացուած 4 անգամ

1 Խաչատուր Մուշեղյան <<Դրամագիտության շրջանառությունը Հայաստանում>>

Աքեմենյան սատրապ Օրոնտեսի դրամների շարքում կան պղնձյա և արծաթյա փոքր արժեչափ ունեցող դրամներ։

Օրոնտեսի դրամները ոչ իրենց ծագման, ոչ էլ շրջանառության առումով Հայաստանի դրամային տնտեսության հետ չեն առընչվում: Քանի որ նրա դրամները թողարկվել են Փոքր Ասիայում,բնորոշ են այդ վայրերի համար։ Ք.Ա. 4րդ դարի 60ական թվականներին թողարկվում է ոսկե դրամ Օրոմտեսի պատկերով։ Այս դրամը արքայից արքային հակադրվելու մի ցույց էր, որովհետև աքիմենյան կայսրության ոսկյա դրամ կարող էր թողարկել միայն գերագույն տիրակալը։Դրամի վրա հստակությամբ պահպանված է Օրոնտեսի դիմանկարը, որը հայերի մեջ հայտնի է Երվանդ Ե անունով:

Հայաստանի Ա.Հեմենեան փոխարքայ Օրոնտասի դիմա-
քանդակը, մ. թ. ա. 4րդ դար, ոսկեայ դրամի վրայ:
Մեծացուած 3.5 անգամ

Մաս 2. Հայկական առաջին դրամները

Այդ դարի վերջից Հայաստանը ընդգրկվում է հելլենիստական դրամների շրջանառության ոլորտում Հայկական շուկա են թափանցում Ատտիկյան համակարգի ոսկյա և արծաթյա դրամներ: Բայց Հայաստանում չեն դադարում գործել Աքեմենյան դրամները: Հետագայում Միջազգային առևտրի բերումով Հայաստան են թափանցում սելեկյան, պարթևական արծաթյա դրամներ: Հայաստանի տնտեսությամբ զարգացման այս փուլում Ք. ա. 32-րդ դարերում ծագում են հայկական դրամների առաջին օրինակները: Նրանց թողարկումը կատարում է Ծոփքում և Փոքր Հայքում առաջացած հայկական թագավորությունների կողմից[1]:

Այս ժամանակաշրջանի հայկական դրամները պղնձյա էին, ունեին զուտ տեղական նշանակություն, ներքին շուկայի ոլորտից դուրս չէին անցնում: Իրենց կշռային չափով այդ դրամները ատտիկյան համակարգի էին: Ծոպքում այդ ժամանակ(3-2դար) ապրանքադրամական հարաբերությունների զարգացումը պահանջում էր ներքին շուկայի համար անհրաժեշտ մանրադրամների թողարկում: Հայաստանի արևմուտքում երրորդ դարի վերջից մանր առևտուրն ու ծախսը կատարվում էր դրամով: Փոքր Հայքի և Ծոփքի հայ թագավորներից, հայտնի են Քարասպէս, Արշամէսի, Աբդրսպէսի և Քսերքսէսի դրամները որոնք պարբերաբար պահպանվել են հատ ու կենտ նմուշներով[2]: Արշամի թագավորանիստ քաղաքն էր Արշամաշատը, որի հիմնադիրը կհամարվի Արշամը: Արշամի պղնձե դրամը կշռում է 6 գրամ 60, իսկ տարածությունն է 20 հզրդ մետր[3]:

Առաջին երեսին Արշամի կիսանդրին է, գդակով և արքայական ապարօշով, իսկ երկրորդ կողմում վազող նիզակակիր ձիավորը, որի գլխավերևը գրված է հետևյալ խորագիրը <<Արքայի Արշամաց>>:

---

1 Հայ ժողովրդի պատմություն – բազմահատորյակ Հ.1 Երևան 1971թ.

2. Խաչատուր Մուշեղյան <<Դրամագիտության շրջանառությունը Հայաստանում>>

3. Կարապետ Բասմաջյան-<<Հայ ընդհանուր դրամագիտություն>>

Արշամի դրամը

Հայկական այդ դրամների վրա պատկերված են՝ մի կողմում թագավորի դիմանկարը, մյուս կողմից պաշտամունքային խերհրդանշաններ՝ արծիվ, ձի, ինչպես նաև Աթենաս և Անահիտ դիցուհիների կերպարները։ Հայկական այս դրամները տարածված չեն եղել Մեծ Հայքի Հյուսիս Արևելյան շրջաններում՝ Արարատում, Շիրակում, Սյունիքում և Լոռի Փամբակում։ Սա նշանակում է, որ այս դրամները սահմանափակ դեր են ունեցել Հին Հայաստանում։ Դրամների սակավությունը թույլ չի տալիս դատելու թե դրամաշրջանառության ինչ ոլորտ են ունեցել այս դրամները։ Ուստի ենթադրում ենք, որ վաղ հայկական այս դրամները թողարկվել են բացառապես ներքին առևտրի զարգացման պահանջով, որը ընթացել է Ծոփքի և Փոքր Հայքի քաղաքներում։ Վերոհիշյալ թագավորական դրամները հատվել են տնտեսական կյանքի կենտրոններ Արշամաշատում և Արկաթիակերտում։

Մաս 3 Արտաշեսյան դրամները։

2-1 դարերում երկրի հետագա զարգացումը, նրա քաղաքական տնտեսական հզորացումը պայմանավորված էր հայկական դրամի ավելի ծավալուն թողարկմամբ Արտաշեսյանների օրոք։ Արտաշեսյան դրամները ճանաչելը դժվար չէ։ Նրանք բոլորն

էլ ունեին հայկական հատկանշական խոյը (Tiara), որը որակապես տարբերվում է այն խոյից, որ կրում են Կոմագենեի և Մեդիայի թագավորները։ Դրամների վրա դաջված խոյը ճանաչվում է իր ունեցած աստղով, և ընկերակցող մեկ կամ երկու արծիվներով[1]։ Արտաշեսյանները իրենց դրամները թողարկում էին Ատտիկյան համակարգի սկզբունքով։ Արտաշես I և Արտավազդ I կողմից թողարկված դրամներ չեն հատնաբերվել, ուստի դրամների թողարկումը սկսվում է Տիգրան Ա-ի ժամանակաշրջանից (Ք. ա. 123-96 թթ)։ Նրա հատած դրամները պղնձյա են և դրանց շրջանառության ոլորտը ուրվագծվում է Հայկական ծեռնաշխարհի հարավարևմտյան կողմերում։ Այս մասին վկայում է Մծբին քաղաքի մոտ բացված պղնձյա դրամների գանձը՝ Հելլենիստական դարաշրջանի խոշորագույն գանձերից մեկը։ Տիգրան Ա-ի դրամները ունեցել են տեղական նշանակություն։ Հայկական դրամների միջազգային ճանաչումը դիտվում է Արտաշեսյանների հզորության բարձրագույն շրջանում՝ Տիգրան Մեծի թագավորության տարիներին (95 ̲ 55 Ք. ա.)։ Ներքին և արտաքին առևտրի պահանջով Տիգրան Մեծի դրամները թողարկվում էին ոչ միայն Հայաստանում, այլև սիրիական քաղաքներում։ Այդ դրամները իրենց կշռային չափով պահպանում էին Ատտիկյան համակարգի սկզբունքը։

Մեծն Տիգրանի դրամները թվով 40 հատ են և իրենց տեսակի մեջ համարվում են աշխարհի ամենակատարյալ հավաքածուն[2]։ Անդրկովկասում Տիգրան Մեծի դրամները տարածվել են Արարատյան դաշտի, Շիրակի, Գեղարքունիքի, Սյունիքի, Արցախի և Գուգարքի շրջաններում։ Ոսկյա դրամներ Տիգրան Մեծի, նրա նախորդող և հաջորդող Արտաշեսյանների կողմից չեն թողարկվել[3]։ Տիգրան Մեծը թողարկել է չորեք դրամներ, մեծ ու փոքր պղինձներ, բայց ծանոթ բոլոր ոսկիները կեղծ են[4]։ Տիգրան Մեծը շրջանառության մեջ է դրել արծաթյա դրամներ։ Դրանց վրա հայոց միապետը ներկայացրել է <<Արքայից Արքա>> տիտղոսը։ Տիգրան Մեծը և նրա հաջորդները դրամների վրա պատկերվել են արևմուտքի գահակալների նման՝ առանց մորուքի, բայց այնպիսի թագով, որով անմիջապես ճանաչելի են դարձել։

---

1. Զարեհ Պտուկյան- <<Արտեշեսյան Հարստության դրամները
2. Հայ դրամգիտական հանդես-1977 թիվ 2
3. Խաչատուր Մուշեղյան <<Դրամագիտության շրջանառությունը Հայաստանում>>
4. Զարեհ Պտուկյան- <<Արտեշեսյան Հարստության դրամները

Արևմուտքի ու արևելքի Հելլենիստական միապետներից ոչ մեկը այդպիսի թագով հանդես չէր եկել։ Իբրև արքայական գերագույն զարդարանք այն ստեղծվել է Արտաշեսյանների օրոք և հայտնի դառնալով անվանվել է <<Հայկական թագ>>[1]։ <<Արքայից Արքա>> Տիգրանի կառավարման տարիների դրամների վրա առաջին անգամ պատկերվել է երկիրն ու պետականությունը հովանավորող աստվածուհու կերպարը ներկայացվելով իբրև մայր դիցուհի։

Հայոց Արտաշեսյան թագը

Հայոց <<Արքայից Արքա>> Տիգրան Մեծ (մթա 95-56թթ)

Տիգրան Մեծի հաջորդների օրոք կրճատվում է հայկական դրամների թողարկումը և թուլանում է նրանց դերն ու նշանակությունը միջազգային առևտրում։ Արտավազդ Բ (Ք. ա. 56-34 թթ) դրամները քիչ օրինակով են հայտնի։ Արտաշեսյան արծաթյա դրամները թողարկվում էին միայն Հայաստանում։ Կան դրամներ հատված պղնձից և հատված չորեքդրամ, հնարավոր է, որ չորեքդրամը հատվել է Արտաշատում։ Աջ կողմում հայկական խոյն է, ձախում ընթացող քառակի կառք, իսկ տիտղոսն է <<Արքայից Արքա>> Արտավազդ։ Արտաշես Բ-ի (Ք. ա. 30-20) հատած պղնձյա դրամները տարբերվում էին մյուս՝ Տիգրանյան դրամներից։ Հայտնաբերված դրամի 1-ին կողմը նորից հայկական խոյն էր, իսկ 2-րդը մարդու պատկեր է, տարբերվում է նաև տառերի գրելաձևը։ Չնայած որ թագավորի անունը հնարավոր չի եղել կարդալ, բայց դրամագետները այն վերագրել են Արտաշես Բ-ին։ Տիգրան Գ (Ք. ա. 20-8/9) հատել է պղնձյա դրամներ, որի առաջին կողմը նմանվում է արծաթի։ Հայկական խոյը դաջված է հինգ երկայն ծոպերով և խոշոր ութատամյան աստղով, առանց ոսկյա արծիվների։ Պղնձյա դրամի վրա թագավորն անմորուս է։

Տիգրան Դ-ի (Քա 8-5 և Քա 2-1) դրամներից հայտնաբերվել են երեք տեսակ պղինձներ։ Բոլորն էլ 1-ին կողմում ունեն միանման պատկեր՝ մորուսավոր թագավորի գլուխը։

Դրամների 2-րդ կողմերը իրարից տարբեր են, որը նշանակում է որ դրանք հատվել են տարբեր դրամատներում կամ ժամանակի ընթացքում փոփոխվել են։

1. Հայ դրամագիտական հանդես-1976 թիվ 1

Արտավազդ Գ-ից (Ք. ա. 5-2) դրամներ մեզ չեն հասել։

Տիգրան Դ և Էրատո (Ք. ա. 2-1)։ Նրանց թողարկած դրամների վրա պահպանվել է <<Արքայից Արքա>> տիտղոսի գրությունը, չնայած որ Արտաշեսյան վերջին արքաները այս տիտղոսը չեն կրել։

Հազվադեպ են վերջին Արտաշեսյան թագավորների դրամները, որոնք նշանակալից տարածում չեն գտել ոչ արտաքին առևտրում, և ոչ էլ Հայաստանի ներսում։ Քանի որ մեծ մասամբ դրամները պղնձյա էին, դրանք օտար շուկաներում չէին ընդունվում, իսկ ներքին շուկայում նրանց օգտագործումը պարզելու վկայություններ չկան։ Ողջ Անդրկովկասում Արտաշես Բ, Տիգրան Գ, Տիգրան Դ, Արտավազդ Դ, և դրանց հաջորդած վերջին թագավորների դրամներ չեն հայտնաբերվել։ Դրամագիտական ժողովածուներում Արտաշեսյան տոհմի վերջին արքաներին վերագրված դրամները ներկայացված են հատ ու կենտ նմուշներով։ Սա ցույց է տալիս այդ դրամների աննշան դերը։

Արքայից Արքա Արտավազդ Բ

Արտավազդ Դ-ի դիմաքանդակը 4-6դդ

Արտաշեսյան դրամների նշանակությունը ըստ Զարեհ Պտուկյանի-<<Արտաշեսյան հարստության դրամները>>

Գլուխ 2

Մաս 1. Արշակունյաց Հայաստանի դրամաշրջանառությունը

Արտաշեսյանների անկումից մինչև Արշակունիների հաստատումը, Հայաստանում դրամաշրջանառությունը զարգացել էր ինչպես անցյալից մնացած, այնպես էլ տվյալ ժամանակաշրջաններում թողարկված դրամներով: Այդ դրամները սպասարկել են երկրի արտաքին և ներքին առևտրի պահանջները: Արշակունիները հայոց գահին բազմեցին 66թ.: Գահ բարձրացավ ծագումով պարթև Տրդատ Ա-ն (6675 թթ): Թագավորի օծման արարողությունը տեղի ունեցավ Հռոմում 66 թվականին Ներոն Կայսեր ձեռքով: Արշակունյաց հարստության հաստատման հետ Հայաստանում բնորոշ են դառնում Հռոմի Վաղ կայսերական արծաթյա դրամների տարածումը: Դրանք հիմնականում Օգոստոս Օկտավայի անունով արծաթյա դրամներ էին, որոնցով էլ Հայաստնում տարածվել են կայսերական դրամները: Կայսերական դրամները շրջանառության մեջ մնացին երկար: Թողարկվում էին բարձրորակ արծաթից մոտ 4 գրամ չափով, և նույնիսկ Ներոնի կողմից Հռոմում կատարված տնտեսական բարեփոխումներից հետո այն շարունակվեց մնալ գերիշխող, որովհետև նոր դրամների արծաթը չուներ այն մաքրությունը, որը հատուկ էր վազ կայսերական Օգոստոսյան դրամներին: Ներոնի և նրա հաջորդ կայսրերի թողարկած դրամները Հայաստանում հայտնվեցին միջազգային առևտրի միջոցով, սակայն չունեցան այն հաջողությունը, որ ունեին վաղ կայսերական դրամները: Նշենք, որ Արշակունի թագավորները դրամ չէին թողարկում, որը պայմանավորված էր նրանց իրավական վիճակով, քանի որ մինչև 3-րդ դարը Արշակունիները ժառանգական իրավունք գահի համար չունեին: Կարելի է ենթադրել, որ դրամ հատելու իրավունքը վերապահված էր Արշակունյաց տոհմի մեծ տանը՝ Իրանի Արշակունիներին (պարթև) Արշակունիների հայկական ճյուղին վերաբերող դրամներ 12-րդ դարերում չեն հայտնաբերվել: Ողջ 2-րդ դարի ընթացքում հռոմեական դրամների գերիշխանությունը Հայաստանի դրամական շրջանառության մեջ պահպանվում էր:

Գանձերի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանում և հարևան երկրներում Հռոմի կայսերական դրամները շրջանառության մեջ հանդես են եկել միատարր ձևով, այսինքն առանց այլ ծագում ունեցող դրամների հետ խառնված լինելու: Գանձերի կազմում հռոմեական դրամներից բացի ուրիշ դրամներ չեն

գտնվում։ Պարթևական դրամները, որոնք Հայաստանում Արտաշեսյանների օրոք լավ տարածում ունեին Արշակունիների տիրապետության ժամանակ արդեն չքացել էին շրջանառությունից[1]։ Հետագայում պարթևների կործանումով Իրանում վերացավ նաև դրամի թողարկումը։

Միջազգային առևտրի բերումով 2-րդ դարում Հայաստան են թափանցել նաև հունա-հռոմեական դրամներ հունարեն արձանագրություններով։ Հռոմեական դրամների ընդհանուր հոսանքի հետ Հայաստան էին թափանցել նաև Հռոմին ենթակա Բոսֆորի թագավորության դրամները։ 2-րդ դարի վերջին հայոց մայրաքաղաքի ներսում զարգացող ներքին առևտրի պահանջով առաջ էր եկել նաև պղնձյա դրամների տեղական թողարկումը քաղաքամայր Արտաշատի անունով։ Արտաշատը հայտնի էր դարձել Փոքր Ասիայից և Միջագետքից դեպի կովկաս տանող քարավանային առևտրում։ ժամանակագրական առումով Արտաշատ քաղաքի դրամները ծագել են 183 թ։ Դրամի թողարկում կատարվել է Արշակունի Վաղարշ Բ-ի թագավորության տարիներին։ Մինչ այդ ոչ Արտաշեսյանների, և ոչ էլ Արշակունիների օրոք Հայաստանի որևէ քաղաքի անունից դրամներ չեն թողարկվել։ Արտաշատում հատված դրամները իրենց պատվերագրությամբ պահպանել էին հելլենիստական դարաշրջանին բնորոշ տվյալները։ Դրանք ունեին դիցաբանական պատկերներով նկարներ։ Արտաշատի դրամը ներկայացնում է ժամանակը առանց միջնորդության և վերաբերում է 2-րդ դարի վերջին քաղաքական կյանքի պատմությանը։ Մեզ հայտնի չէ, թե մինչև երբ է տևել քաղաքային այդ դրամների թողարկումը Արտաշատում։ Քանի որ այս դրամները պղնձյա էին, արտաքին առևտրում կիրառելի չէին և շրջանառության ներքին ոլորտից դուրս չէին կարող գալ։

Մայրաքաղաք Արտաշատի դրամը, թողարկուած երկրորդ դարի վերջին։ Մեծացուած 3 անգամ

1. Խաչատուր Մուշեղյան <<Դրամական շրջանառությունը Հայաստանում>>

Այնուհանդերձ Հայաստանի դրամական շրջանառության բնորոշությունը կազմում էին հռոմեական արծաթյա դրամները, որոնք միջազգային լայն տարածում ունեին ինչպես Արշակունիների հարստության, այնպես էլ նրանց հզորության այն տարիներին, երբ Արտաշատում թողարկվեցին պղնձյա դրամները[1]։

3-րդ դարի առաջին կեսին Հայաստանում թուլանում է հռոմեական դրամների հոսանքը։ Այս ժամանակաշրջանում շրջանառության մեջ էին մտել նոր կշռային չափով և նոր պատկերագրությամբ օժտված դրամներ։ Դրանք Սասանյան Իրանի թագավորական դրամներն էին, որոնք շուրջ 5 դար իշխել են միջազգային ապրանքափոխանակության գործարքներում։ Սասանյանները հատել են ոսկյա, արծաթյա, և պղնձյա դրամներ Հայկական աղբյուրներում Սասանյան ոսկե դրամները հայտնի են <<Դահեկան>> անունով։ Այդ ոսկյա դրամները գործնական նշանակություն Հայաստանում չեն ունեցել։ Հազվադեպ են նաև պղնձյա դրամները, որոնք և Դվինում, և ընդհանրապես Հայաստանում պեղումների ժամանակ ի հայտ չեն եկել։ Պղնձյա միավորը կոչվել է <<Դանգ>> և Հայաստանում տարածում չի ունեցել։ Հայաստանում ամենատարածվածը եղել է արծաթյա դրախման։ Հայաստանում հայտնաբերված ամենավաղ Սասանյան դրամը վերաբերում է 3-րդ դարի առաջին կեսին, որը գտնվել է Գառնիում 1963 թ։ Սասանյան դրամները օժտված էին տարբեր պատկերներով։ 4-րդ դարի վերաբերյալ Հայաստանում և հարևան երկրներում դրամային շրջանառության մասին տեղեկություն չունենք, բայց կասկած չկա, որ դրամաշրջանառության մեջ շարունակել են իշխել Սասանյան դրախմաները։

5-րդ դարում Հայաստան են թափանցել վազբյուզանդական սոլիդները։ Դրանք հայտնաբերվել են Դվինում, Աշտարակում և Կոտայքի շրջանակում։ Հայաստանում իրանական արծաթին զուգահեռ տարածվում էր նաև վաղբյուզանդական ոսկյա դրամները։ Վաղ բյուզանդական ոսկյա դրամների թափանցումը Հայաստան 4-5-րդ դարերում կարող էր կատարվել ինչպես կայսրությունից Հայաստան, այնպես էլ Հայաստանից կայսրություն գնացող քարավանային առևտրի շնորհիվ։ Վաղբյուզանդական դրամները Հայաստանում լայն տարածում չեն ունեցել, առավելությունը տրվում էր Սասանյան արծաթյա դրամին։

1. Խաչատուր Մուշեղյան <<Դրամական շրջանառությունը Հայաստանում>>

Միջազգային առևտրի համար Հայաստանի համար աշխարհագրական դիրքը հնարավոր է դարձնում տեղական նշանակության Սասանյան դրամների թողարկումը։

Դվինում դրամների թողարկումը կատարվել է Որմիզդ Դ-ի ժամանակ (579-590 թ) Սասանյանների թուլացման հետ Հայաստան թափանցած բյուզանդական դրամները Սասանյան դրախմաների հետ առևտրական գործարքներում դժվարություններ չէին ներկայացնում։ Սասանյանների անկումից հետո բյուզանդական դրամները դարձան քրիստոնեական արևելքի տարածված դրամները արաբական արշավանքների նախօրյակին։

Մաս 2. Բագրատունյաց Հայաստանի դրամները

Արտաշեսյան արքայատոհմի անկումից հետո հայ ազգային դրամների թողարկումը կանգ է առնում։ Նախորդ բաժնում արդեն ներկայացրել եմ, թե ինչ դրամներ էին օգտագործվում Հայաստանում։ 7-րդ դարի երկրորդ կեսից Հայաստանը արաբ խալիֆայության կողմից նվաճվելուց հետո դրամաշրջանառությունը կատարվում էր Օմայան արքայատոհմի, իսկ ավելի ուշ՝ Աբբասյան դրամներով։ Աբբասյան խալիֆայության դրամներից Հայաստանում շրջանառվել են արծաթյա դիրհեմներ, պղնձյա ֆելսեր և սահմանափակ քանակությամբ ոսկյա դրամներ։ X դարում արծաթյա դիրհեմները փոխարինվում են բյուզանդական ոսկե դրամներով, որոնք տարածաշրջանում ունեցել են միջազգային դեր։ Հայաստան եմ թափանցել նաև սելջուկ տիրակալների դրամները։

885 թվականին հայոց պետականությունը վերականգնվում է։ Իշխանության է գալիս Բագրատունիների արքայատոհմը, որը իշխում է մինչ 1045 թվականը։ Բագրատունյաց արքաների հատած դրամների մասին տեղեկություն չունենք։ Զարմանալի է, որ Բագրատունի հզոր տիրակալները սեփական դրամ չեն հատել։ Նրանք օտար կապիտալի շրջանառությամբ ցանկացել են ավելի զարգացնել Հայաստանի տարածքով անցնող միջազգային առևտուրը։ Նրանց օրոք Դվինում և Պարտավում թողարկվել են արաբական դրամներ։ Բացառություն են Բագրատունյաց հարստության Լոռվա ճյուղի Կյուրիկե Բ թագավորի եզակի դրամները։ Այդ դրամներից հինգը պահպանվում է Երևանի պատմության թանգարանում։ Կյուրիկյան դրամները մեզ հայտնի առաջին հայատառ դրամներն են, որոնց դիմերեսին Հիսուս Քրիստոսի պատկերն է. դիմացից՝ երկու կողմում գրված «Հիսուս Քրիստոս», իսկ դարձերեսին՝«Տեր, օգնիր Կյուրիկե Կյուրիկյանին»։

Այս դրամները հատնվել են Ախթալացի դրամահատարանում, որը պատկանում էր Կյուրիկյան թագավորներին, պղնձից են և կշռում են 3-8 գրամ դրամները ձևավորված են նույն ժամանակի բյուզանդական դրամների տեսքով, կան տեղեկություններ նաև կյուրիկե թագավորի արծաթյա մետաղադրամի մասին։

Կյուրիկե Բ-ի հատած դրամները

Մեզ հայտնի է նաև, որ XII-XIII դարերում Հայաստանում հաստատված Զաքարյանները նույնպես սեփական դրամ չեն թողարկել, և նրանք էլ Բագրատունի արքաների քաղաքականությանը հետևելով կիրառել են օտար դրամներ այդ թվում ևս Աղթալայում հատված վրացական դրամները:

Մաս 3. Կիլիկիան հայոց թագավորության դրամները

Միջնադարում հայկական դրամների թողարկումը կատարվում էր Մայր Հայաստանից դուրս Փոքր Ասիայի Կիլիկիա երկրամասում։ Հայկական դրամների հատումը Կիլիկիայում սկսվել է դեռևս Ռուբինյանների նախաթագավորական ժամանակաշրջանում։ Դրամները եղել են պղնձից և դրանց վրա հայերեն գրերով արձանագրվել են Ռուբինյան իշխանների անունները և նրանց քրիստոնեական դավանանքի՝ խաչի նշանը։ Ռուբինյան Լևոն թագավորը 1198 թ սկսել է Մեսրոպատառ դրամների թողարկումը և շրջանառությունը, թողարկել է ոսկյա, արծաթյա դրամներ։ Լևոն Ա թագավորի դրամները իրենց ձևով հիմք հանդիսացան Կիլիկիայում թողարկվող հետագա դրամների համար։ Հայկական տնտեսության համար բնորոշ են արծաթյա և պղնձյա դրամները։ Լևոն Ա-ն թողարկել է դրամները նաև թագավորության հիմնադրման առթիվ։ Արծաթյա այս դրամներից բացի թողարկել են «երկդրամ», «Կես» դրամ և «Առյուծ» անուններով արծաթյա դրամներ։ Առյուծի պատկերները քրիստոնեական խաչի նշանով հանդիսացել է Կիլիկիայի հայկական դրամների ամենաբնորոշ պատկերը և անզուգական մնացել Առաջավոր Ասիայում թողարկված միջնադարյան դրամների շարքում[1]։ Թողարկվել է նաև պղնձյա խոշոր դրամներ, որոնց մի երեսին պատկերված է թագավորի առյուծանման գլուխը, շրջապատված Լևոն թագավոր հայերից գրությամբ։ Դարձերեսի պատկերված է խաչ շուրջը գրված՝ <<Շինեալ ի քաղաքս ի Սիս>>[2]։ Պղնձե խոշոր դրամը կոչվում էր <<Դանգ>>։ Հերթում-Զաբելի(1226-1270 թթ) թագավորության տարիների թողարկվեցին արծաթե դրամներ, մի կողմի վրա դրոշմված էր Հեթունի և Զաբելի պատկերը, կանգնած և խաչը միասին բռնած, մյուս կողմին խաչակիր առյուծը, շուրջը արձանագրված՝ Հեթում թագավոր հայոց։ 1236-ից 1245թթ. շրջանառության մեջ մտան երկլեզվյան՝ հայերեն ու արաբերեն արձանագրություններով արծաթե դրամներ։ Լևոն Գ-ի օրոք (1270-1289) շրջանառության մեջ մտան «նոր դրամներ»՝ արծաթից։ Դրամի վրա թագավորը ներկայացված էր հեծյալի տեսքով։ Հեթում Բ-ի (1285-1305)թթ թագավորության տարիներից արծաթե դրամներ չեն պահպանվել։ Հայտնի են սակավաթիվ թեթև քաշով և փոքր տրամագծով բիլոնե դրամներ։

1. Հայ դրամագիտական հանդես 1977 մաս 1
2. Հայ ժողովրդի պատմություն – Հ. 3 էջ 733

Դրամի վրա Հեթում Բ թագավորն է և խաչի նշանը արձանագրված է՝ Հեթում թագավոր ամենայն հայոց։

Սակայն որոշ դրամների վրա Հեթում Բ-ն պատկերված էր արևելյան ձևով՝ ծալպստիկ նստած մի ձեռքը կրծքին, մյուսով գավազանը բռնած։

Կոնստանդին Ա-ի ոսկե դրամների մի կողմում ձիավոր թագավորն էր, աջ ձեռքին սուր բռնած, իսկ հակառակ կողմում Սիս անառիկ ամրոցը։ Դրամի վրա նշված էր՝ «Սսոյ բերդն է թագավոր»։ Կան դրամներ որոնց վրա Կոնստանդինը պատկերված է ուղիղ կանգնած աջ ձեռքին սուր ձախին՝ խաչ։ 14-րդ դարի սկզբին ավելի նվազ է դառնում արծաթի պարունակությունը հայկական դրամների մեջ։ Շրջանառության մեջ է մտնում «թագավորին» կոչվող դրամը, որը սակավ արծաթ էր պարունակում։ Դանգերի փոխարեն հանդես է գալիս «փող» կոչված միավորը։ Այս միավորը հատվում էր ներքին շուկայի համար և գնալով ավելի են փոքրանում և չքանում։ Դրամների հատումը կատարվել է հիմնականում պետության վարչական կենտրոն Սիս քաղաքում։ Բացառիկ դեպքերում դրամներ հատվել են Տարսոն և Այաս քաղաքներում։ Դրամական տնտեսության սնանկությունը դարձել էր բացահայտ։

Բիլոնե փոքրիկ դրամները Կիլիկիան Հայաստանի վերջին դրամներն էին։ Հետագայում Կիպրոսում հատվում էին լատինատառ դրամներ, որոնց վրա դրոշմված էր իրենց տիտղոսը իբրև Հայաստանի թագավորներ, բայց սրանք հայկական դրամների հետ ոչ մի կապ չունեին։ Այսպիսով Կիլիկիան հայկական պետությունում իր ծագման օրից մինչև վերջ բոլոր գահակալները դրամներ են հատել հայերեն գրությամբ։ Որպես կանոն դրամների վրա տարեթվերը չեն հիշատակվում։Կիլիկիան դրամներ հայտնաբերվել են ոչ միայն Կիլիկիայում, այլև նրա սահմաններից դուրս որովհետև սպասարկել են ոչ միայն ներքին այլև արտաքին շուկայի պահանջները։ Հայաստանում և հարևան երկրներում դրանք չեն հայտնաբերվել։ Առևտրի բերումով հայտնվել են Միջերկրականի, Փոքրասիական, Սիրիական, Բալկանյան, Եգիպտական և Իտալական շուկաներում։

Լևոն թագավորի ոսկե դրամը

Գլուխ3

Մաս1. Հայաստանի առաջին հանրապետության դրամները։

Հայաստանի առաջին հանրապետությունը հռչակվեց 1918թ մայիսի 28-ին։ Մինչ այդ 1917թ նոյեմբերին ստեղծվեց Անդրկովկասի կոմիսարիատը, որը կազմվեց հայերի, վրացիների և կովկասյան թուրքերի (ադրբեջանցիներ 1918թ մայիս) ներկայացուցիչներից։ Կենտրոնը Թիֆլիսն էր։ Ֆինանսների նախարարությունը 1918թ փետրվարին թողարկեց դրամանիշներ՝ բոներ, որոնց վրա կար նաև հայերեն մակագրություն (ֆինանսների նախարար Խ. Կարճիկյան)։ Դրանք առաջին թղթադրամներն էին, որոնց վրա կար հայերեն մակագրություն, ուստի դրամագետների կողմից այն դիտարկվում է որպես 1-ին հայկական թղթադրամներ։

Բոների վրա կան ազգային տարբեր նախշեր և զարդանախշեր և գունավոր ձևավորմամբ են։ 1918թ. մայիսի 28-ին Հայաստանը հռչակվեց անկախ և ՀՀ Ֆինանսների նախարարությունը որոշեց նոր դրամներ թողարկել։ Որոշվեց շրջանառության մեջ դնել Պետական բանկի Երիվանի բաժանմունքի ժամանակավոր չեկերը և միևնույն ժամանակ բոները մնացին շրջանառության մեջ։ Նախատեսվում էր, որ չեկերը պետք է ժամանակավոր օգտագործման լինեին և 3 ամիս հետո փոխարինվեին թղթադրամներով։

ՀՀ-ի թղթադրամները թվագրված են 1919 թվականով և թողարկվել են 50,100,250 ռուբլի անվանական արժեքով։ Տպագրությունը իրականացվել է Լոնդոնում և շրջանառվել են 1920թ. հունիսից։ Թղթադրամի ձևավորման մեջ օգտագործվել են ազգային պատկերներ և նախշեր։ Կա Արարատ լեռան պատկերը, սուրը ձեռքին արծվի պատկերը, որը հարվածում է օձին, կա նաև ճախարակով հայուհու պատկերը։ Մակագրությունները հիմնականում հայերեն են, մասամբ ռուսերեն և ֆրանսերեն։ ՀՀ-ի թղթադրամները երկար չշրջանառվեցին, քանի որ խորհրդային կարգերի հաստատումից հետո դուրս եկան շրջանառությունից։ 1921թ. սկսվեց շրջանառվել ՀՍԽՀ թղթադրամները։

Մաս 2. Հայաստանի 2-րդ հանրապետության դրամը

1991թ սեպտեմբերի 21-ին Հայաստանի անկախության հռչակմամբ առաջացավ ազգային արժույթ ունենալու անհրաժեշտությունը: Մինչև սեփական արժույթ ունենալը Հայաստանում շարունակվում է շրջանառվել խորհրդային ռուբլին:

Կային ազգային արժույթի անվան տարբեր առաջարկներ՝ «դրամ», «սատակ», «իբար», «դահեկան», «թագավորին», իսկ արտադրյալ միավորինը՝ «մանրադրամ», «ար», «մանար», «իմի», «զուզա», «պլիկ», «լումա»: 1992թ մարտի 27-ի հանձնաժողովի կողմից որոշվեց ՀՀ ազգային արժույթը անվանել «դրամ», իսկ միավորը «լումա»: Հայկական նոր արժույթը շրջանառության մեջ դրվեց 1993թ նոյեմբերի 19-ի որոշմամբ և նույն թվականի նոյեմբերի 22-ից ՀՀ-ում օրինական վճարամիջոց է համարվում «դրամը»: Քանի որ ՀՀ ում բացակայում էին սեփական դրամատպարանները և դրամահատարանները, ՀՀ ԿԲ-ի կողմից շրջանառության մեջ էր դրվում օտարերկյա կազմակերպությունների կողմից թողարկված ՀՀ մետաղադրամներ և թղթադրամներ: Հայկական դրամի գրանշանն է «֏» նշանը: 1993-ից 1995թթ. նմուշի թղթադրամների վրա դիմերեսին գրված էր անվանական արժեքը թվանշաններով, և բառերով, տպագրման տարեթիվը թողարկող բանկի անվանումը՝ «Հայաստանի Հանրապետության բանկ»: Գրառումները դարձերեսին՝ անվանական արժույթը թվանշաններով և բառերով, թողարկվող բանկի անվանումը «ՀՀ բանկ» կամ «ՀՀ ԿԲ»:

1998-ից 2015թ նմուշի թղթադրամներ: Գրառումները դիմերեսին՝ անվանական արժեքը թվանշաններով և բառերով, սերիան, տպագրման տարեթիվը, թողարկող

բանկի անվանումը հայերեն և անգլերեն, բանկի և ֆինանսների նախագահի և նախարարի գրառումներ թղթադրամների վրա պատկերված գործիչի անունը, կյանքի ու մահվան տարեթիվը: Իսկ 50000 թղթադրամի վրա՝ <<Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն>> և <<1700>> գրառումներ: Դարձերեսին անվանական արժեքը թվանշաններով և բառերով, թողարկող բանկի անվանումը հայերեն և անգլերեն, իսկ 50000 թղթադրամի վրա՝ <<ԱՍՏՎԱԾ ընդ ՄԵԶ է>> և <<301-2001>> գրառումները:



Մետաղադրամները թողարկվում են դրամաշրջանառությունը ապահովելու համար, թողարկվում են հոբելյանական և հուշադրամները թողարկվում են ի հիշատակ պատմական իրադարձությունների:

Հուշադրամները բարձրորակ են, ազգային, միջազգային, պատմամշակութային, հոգևոր և այլ արժեքներ հավերժացնելու և հասարակությանը ներկայացնելու համար։ Հայկական դրամի նոր նմուշներ շրջանառության մեջ են դրվել 2022թթ։

Եզրակացություն և առաջարկություն

Ուսումնասիրելով հայ դրամագետների աշխատանքները և նրանց տված տեղեկությունները, մեզ համար հասկանալի է դառնում, որ Հայաստանը մեծ դեր է ունեցել արևելքի ու արևմուտքի միջազգային ապրանքափոխանակության գործում: Սրան նպաստել է նաև Հայաստանի աշխարհագրական դիրքը: Հայաստանը դրամի ու գանձերի հայտնություններով առաջիններից է: Այս իրադարձությունն էլ թույլ է տալիս եզրակացնել Հայաստանում գործող դրամների բազմազանության մասին: Հայաստանում օգտագործվել են հունական, հռոմեական, աքեմենյան, սասանյան, բյուզանդական և այլ դրամներ: Հայաստանում դրամներ թողարկվել են դեռևս սատրապական ժամանակաշրջանում, սակայն այա դրամները չեն եղել հայկական և հայատառ, և միջազգային շրջանառություն չեն ունեցել, թողարկվել են զուտ ներքին առևտրի պահանջների համար:

4-րդ դարում Հայաստանը մտնում է հելլենիզմի մեջ: 3-2 դարերում Հայաստանում՝ Ծոփքում և Փոքր Հայքում հատվում էին 1-ին դրամները, որոնք ունեին տեղական նշանակություն: Հայկական դրամները տեղական շրջանառությունից դուրս են գալիս Տիգրան Մեծի օրոք, որը թողարկում է արծաթյա և պղնձյա դրամներ: Տիգրան Մեծին վերագրվող ոսկյա դրամները կեղծ են և Արտաշեսյանների մյուս արքաների հատած դրամները ևս մեծ շրջանառություն չեն ունեցել: Արտաշեսյանների անկումից հետո հայկական դրամների հատումը դադարում է: Չնայած Արշակունյաց և Բագրատունյաց Հայաստանի հզոր արքաների գործունեությանը, այնուամենայնիվ դրամներ չեն հատում: Զարմանալի է, որ նույնիսկ Բագրատունյաց Հայաստանում օգտագործվել են օտար դրամներ:

Հայկական դրամի բացակայությունը և օտար դրամների շրջանառությունը բացատրում են Հայաստանում գործող միջազգային առևտուրը խորացնելու նպատակով: Սակայն կարծում եմ, որ կա այլ խնդիր, որը կապված է երկրի ներքին քաղաքական վիճակի հետ: Սակայն պետք է հիշել Տաշիր Զորագետի Կյուրիկյան դրամների մասին, և կարելի է համարել, որ սրանք իրավմամբ 1-ին հայկական դրամներն էին, քանի որ հայատառ մակագրությամբ էին: Կիլիկիայում նույնպես թողարկվել են հայատառ դրամներ, որոնց վրա գրված է եղել Կիլիկիայի խորհրդանիշ խաչակիր առյուծը: Դրամները եղել են և տեղական և միջազգային նշանակության և

հատվել են ոսկուց, արծաթից և պղնձից։ Կարծում եմ, որ սեփական դրամ հատելը կախված է նաև երկրի ներքին տնտեսական հզորությունից և միջազգային ասպարեզում ունեցած նրա դերից ու հեղինակությունից, որը թույլ կտա շրջանառել այդ դրամները։

Կարծում եմ նաև, որ դրամ հատելը և այն շրջանառելը կապված է եղել տվյալ ժամանակաշրջանի աշխարհաքաղաքական վիճակի հետ։ Հետագայում 1918թ Հայաստանի 1ին Հանրապետության ստեղծումից հետո փորձ է արվել շրջանառության մեջ դնել հայկական դրամը։ Նախ շրջանառվել է Անդրդաշնության միասնական դրամը՝ Բոները, որի վրա կար նաև հայերեն գրություն։ 1920թ շրջանառվեցին 1-ին հայկական դրամները, որոնք նույնպես երկար կյանք չունեցան, քանի որ Հայաստանը դարձավ խորհրդային և շրջանառվող դրամական միավորը ռուբլին էր։ Հայակական դրամները անհրաժեշտությունը առաջացավ Հայաստանի անկախ 2-րդ Հանրապետության ծնունդով։ 1993թ. նոյեմբերից այն սկսվեց շրջանառվել։ Ազգային արժույթը կոչվեց դրամ, իսկ արտադրյալ անունը լումա։ Դրամը որպես շրջանառվող միջոց կարողացավ ամրապնդվել Հայաստանում (իհարկե դժվարությամբ)։ Սակայն այդ լումա կոչված միավորը կամ մանրադրամը թողարկվեց միայն առաջին սերնդի թղթադրամների հետ և կարծես հետագայում չքացավ։ Մանրադրամները՝ 10,20 նույնպես այդքան չեն շրջանառվում։ Լավ է, որ որպես պետություն ունենք մեր ազգային դրամական համակարգը, բայց հարկավոր է մշակել և ձևավորել Ֆինանսատնտեսական և առևտրային այնպիսի քաղաքականություն, որ շրջանառվի և Լուման և փոքր արժեք ունեցող դրամները, այլապես նրանց թողարկումը անիմաստ է դառնում։

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՍՀ հատոր 3
2. Հայ ժողովրդի պատմություն. Բազմահատորյակ հատոր 1,3
3. Կարապետ Բասմաջյան <<Հայ ընդհանուր դրամագիտություն>>
4. Խաչատուր Մուշեղյան <<Դրամական շրջանառությունը Հայաստանում>>
5. Զարեհ Պտուկյան <<Արտաշեսյան հարստության դրամները>>
6. Հայ դրամագիտական հանդես 1977թ. 2-րդ, 1976թ. 1-ին
7. Վիքիպեդիա ազատ հանրագիտարան-1-ին, 2-րդ հանրապետության դրամները